Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
մարտի 1 -ի N 80 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉՈՐՍ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՄՆՆԴԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

1.	Ծրագրի նպատակը	Թիրախային մարզերում առավել խոցելի տարեցների, հաշմանդամություն և քրոնիկ հիվանդություն ունեցող անձանց առողջության և կյանքի որակի բարելավում
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով
3.	Բարեգործը	Շվեյցարական Կարմիր խաչ
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզեր, սոցիալ-առողջապահական ոլորտ
6.	Ծրագրի բյուջեն	39 338 610 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի 280 առավել խոցելի տարեցներ և հաշմանդամություն ունեցող անձինք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2018 նոյեմբերի 1-ից մինչև 2019 թ. հոկտեմբերի 31-ը
9.	Ծրագրի նպատակը	Սննդի ապահովման ծրագիրը կնպաստի Հայաստանի մարզերում ապրող միայնակ տարեցների և ՀՈՒԱ-ների բարօրությանը և ՀԿԽԸ-ի մարզային մասնաճյուղերի կարողությունների զարգացմանը: Ծրագրից ակնկալվում են հետևյալ արդյունքները՝ 1. ՀԿԽԸ-ի մասնաճյուղերի գործունեության տարածքի խոցելի մարդկանց սննդի զամբյուղի բարելավում: Բարեգործական ճաշարանի ու սննդամթերքի աջակցության ծառայությունները մատչելի կլինեն Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի եւ Վայոց Ձորի մարզերի առավել խոցելի տարեցների համար: 2. ՀԿԽԸ-ի մասնաճյուղերի կողմից սննդի աջակցության ծրագրերի

		կառավարման բարելավում՝ ներառյալ ռեսուրսների մոբիլիզացում և այլ շահագրգիռ կողմերի հետ համակարգում: Ծրագիրը կբարելավի ՀԿԽԸ-ի մասնաճյուղերի համայնքային փոքրածավալ ծրագրերի կայուն կառավարման կարողությունները և կամավորների հետ աշխատելու հմտությունները: 3. Ծրագրի շրջանակներում, ըստ վերը նշված ակնկալվող արդյունքների, նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝ 1.1. Արարատի մարզի առավել խոցելի 70 տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց կտրամադրվի տաք սնունդ բարեգործական ճաշարանում՝ շաբաթական 3 անգամ: Ճաշացանկի կազմում, սննդամթերքի ձեռքբերում և պահեստավորում, 70 միայնակ տարեցների ապահովում տաք կերակուրով՝ շաբաթը 3 օր: Տևողությունը՝ 2018 թ. նոյեմբերի 1- ից մինչև 2019 հոկտեմբերի 31-ը: Ընդհանուր բյուջեն՝ 7 931 998 դրամ 1.2. Արագածոտնի մարզի 70 միայնակ տարեցների, քրոնիկ հիվանդություններ ունեցողների և հաշմանդամների կտրամադրվի սննդային փաթեթ՝ ամսական 3 անգամ: Շահառուների ցուցակների հստակեցում և շահառուների հետ հաղորդակցում, անձնակազմի և կամավորների ներգրավում, աշխատանքային տարածքի բարելավում, վերանորոգում, կահավորում, սննդամթերքի ձեռքբերում և պահեստավորում, շահառուներին այցերի միջոցով՝ ամսական 3 անգամ սննդային փաթեթների տրամադրում, տարեցների համար միջոցառումների կազմակերպում: Տևողությունը՝ 2018 թ. նոյեմբերի 1-ից մինչև 2019 թ. հոկտեմբերի 31-ը: Ընդհանուր բյուջեն՝ 6 783 420 դրամ:

		1.3. Գեղարքունիքի մարզի 70 միայնակ տարեցների, քրոնիկ հիվանդություններ ունեցողների և հաշմանդամների կտրամադրվի սննդային փաթեթ՝ ամսական 2 անգամ: Շահառուների ցուցակների հստակեցում և շահառուների հետ հաղորդակցում, անձնակազմի և կամավորների ներգրավում, սննդամթերքի ձեռքբերում և պահեստավորում, շահառուներին այցերի միջոցով՝ ամսական 2 անգամ սննդային փաթեթների տրամադրում: Տևողությունը՝ 2018 թ. նոյեմբերի 1- ից մինչև 2019 թ. հոկտեմբերի 31 –ը: Ընդհանուր բյուջեն՝ 7 994 100 դրամ: 1.4. Վայոց ձորի մարզի 70 միայնակ տարեցների, քրոնիկ հիվանդություններ ունեցողների և հաշմանդամների կտրամադրվի սննդային փաթեթ ամսական 2 անգամ: Շահառուների ցուցակների հստակեցում և շահառուների հետ հաղորդակցում, անձնակազմի և կամավորների ներգրավում, սննդամթերքի ձեռքբերում և պահեստավորում, շահառուներին այցերի միջոցով՝ ամսական 2 անգամ սննդային փաթեթների տրամադրում: Տևողությունը՝ 2018 թ. նոյեմբերի 1- ից մինչև 2019 թ. հոկտեմբերի 31 –ը: Ընդհանուր բյուջեն՝ 8 134 800 դրամ: **2.1.** Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզային մասնաճյուղերի կարողությունների բարելավում: Ծրագրի կայուն կառավարման հմտությունների սեմինար, անձնակազմի և կամավորների վերապատրաստում, համայնքի և ռեսուրսների մոբիլիզացիայի սեմինար, տարեցների և ՀՈՒԱ-ի հետ աշխատելու հմտությունների ուսուցում, Արարատի ՄՄ կազմակերպական կարողությունների գնահատում, կամավորների խրախուսման միջոցառումների կազմակերպում, ՏԻՄ և այլ շահագրգիռ կողմերի հետ

		համագործակցություն: Տևողությունը՝ 2018 թ. նոյեմբերի 1- ից մինչև 2019 թ. հոկտեմբերի 31 –ը: Ընդհանուր բյուջեն ՝ 4 424 492 դրամ: Կազմակերպական և պահպանման ծախսեր, որոնք ներառում են՝ • գործունեության համար անհրաժեշտ մեքենաների վառելիքի ծախս՝ 671 200 դրամ • մեքենայի վարձակալության ծախս ՝ 980 000 դրամ, • գրենական պիտույքներ՝ 324 000 դրամ, • կոմունալ և հաղորդակցման ծախսեր՝ 366 600 դրամ • բանկային ծախսեր ՝ 12 000 դրամ • աշխատավարձ և օրապահիկներ ՝ 1 716 000 դրամ: Տևողությունը՝ 2018 թ. նոյեմբերի 1- ից մինչև 2019 թ. հոկտեմբերի 31 –ը: Ընդհանուր բյուջեն՝ 4 069 800 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Մննդամթերքի ձեռքբերում՝ 27 000 600 դրամ 2. Բարեգործական ճաշարանի խոհարարի աշխատավարձ՝ 1 451 400 դրամ 3. Ծրագրում ներգրավված ՀԿԽԸ-ի մասնաճյուղերի աշխատակազմի և կամավորների ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների տրամադրման սեմինարների կազմակերպման և մասնակիցների կեցության ծախսեր՝ 3 950 000 դրամ 4. Կամավորների ճանապարհածախս՝ շահառուներին շաբաթը մեկ անգամ այցելելու և սոցիալ-հոգեբանական աջակցություն ցուցաբերելու համար՝ 1 266 810 դրամ 5. Ծրագրի իրականացման համար տեխնիկական միջոցների և կահույքի ձեռքբերում՝ 600 000 դրամ 6. Ծրագրի տարածքի վերանորոգում՝ 1 000 000 դրամ 7. Գրասենյակային ծախսեր ՝ 324 000 դրամ 8. Կոմունալ և հաղորդակցման ծախսեր՝ 366 600 դրամ

		9. Վառելիքի ծախսեր ՝ 671 200 դրամ 10. Մեքենայի վարձակալության ծախսեր՝ 980 000 դրամ 11. Բանկային ծախսեր՝ 12 000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական և պահպանման ծախսեր, որոնք ներառում են • գործունեության համար անհրաժեշտ մեքենաների վառելիքի ծախսեր՝ 671 200 դրամ • մեքենայի վարձակալության ծախսեր ՝ 980 000 դրամ, • գրենական պիտույքներ՝ 324 000 դրամ, • կոմունալ և հաղորդակցման ծախսեր՝ 366 600 դրամ • բանկային ծախսեր ՝ 12 000 դրամ • աշխատավարձ և օրապահիկներ՝ 1 716 000 դրամ Ընդամենը՝ 4 069 800 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Շահառուների ընտրության շրջանակներում նախատեսվում է համագործակցել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և սոցիալական աջակցության տարածքային մարմինների հետ. Համագործակցություն՝ ՀՀ Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզպետարանների, Մասիսի, Աշտարակի, Սևանի և Եղեգնաձորի քաղաքապետարանների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել ամսական, եռամսյակային և ավարտական հաշվետվություններ Շվեյցարական Կարմիր խաչին: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է գործողությունների անմիջական վերահսկում: Ներկայացվելու են հաշվետվություններ Բարեգործական ծրագրերի համակարգման խարհրդակցական հանձնաժողովին՝ համաձայն սահմանված կարգի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ